

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԻՒՐԴԵՐԸ \*)

### V

Այժմ աւրօի ցեղապետ Ջափար աղան ամբողջ Աւրպատականի ուշադրութիւնն է գրաւել: Ազգաբնակութեան խօսակցութեան միակ առարկան նա է կազմում:

Նրա կողմուտը և ասպատակութիւնը աւելի ու աւելի սանձարձակ, աւելի ու աւելի յանդուգն ու ծայրայեղ բնաւորութիւն են կրում: Պարսից կառավարութիւնը այլևս չկարողանալով տանել այդ՝ մի քանի անգամ զօրք է ուղարկել նրան բնաջինջ անելու նպատակով:

Բայց ո՞վ է Ջափար աղան. դրան պատասխանելու համար սկսենք քիչ հետուից:

Աւրօի ցեղը ընդհանրապէս նշանաւոր դերք և հեղինակութիւն է վայելում Պարսկաստանի քիւրդերի մէջ: Այդ ցեղի աշխրէթները յայտնի են ոչ միայն իրանց քաջութիւնով, յանդուգն կռիւններով, որ շատ անգամ առասպելական և խորհրդաւոր դոյն են ստանում ժողովրդի բերանում, այլ և՛ համարւում են սիրուած, ազնիւ ցեղից-նրանք լժողովններ են:

Առաջին կռիւը պարսից կառավարութեան հետ տեղի է ունեցել հոչակաւոր Ալի աղայի ցեղապետութեան օրով:

Իեռ մի քանի տարի էր, ինչ մեռի էր Իսմայէլ աղան, Ալիի հայրը: Աւրօի ցեղը Տաճկաստանից եկել է Պարսկաստան և բռնել է Ճարան Իսմայէլ աղայի ժամանակ, մօտ վաթսու-նական թուականներին:

Հէնց առաջին օրերից, երբ Աւրօի ցեղը եկաւ Ճարա և տեղը ամրացրեց, նա վարում էր գրեթէ անկախ դրութիւն, չէր ուզում ճանաչել պարսից կառավարութեան զիրիշխանութիւնը: Իսկ այս հանգամանքը աւելի խիստ բնաւորութիւն ստացաւ և աչքի դարձեց մանաւանդ Ալի աղայի ցեղապետութեան ժամանակ: Քանի՛-քանի անգամ պարսից կառավարու-

\*) Տես «Մուրճ», № 6.

Թիւնը նրան կանչել է Թաւրիզ և Թէհրան, բայց նա միշտ էլ արհամարհել է և կտրուկ ու բացարձակ մերժել է կառավարութեան պահանջը: Սրանից զատ՝ Ալի աղան պարբերաբար յարձակուով էր մօտակայ գիւղերի վրայ, թալանուով, կողոպտուով, սպանուով...

Անա այս յանդուգն քիւրդին և նրա բոյնը բնաջինջ անելու համար էր, որ կառավարութիւնը կազմակերպել էր այդ կռիւր:

Պարսից կառավարութեան թելադրութեան և դիմուածի համաձայն Տաճկաստանը ձերբակալուով է Ալի աղային Բաշղալայի մօտերքը և յանձնուով պարսից կառավարութեան, որ բերուով է նրան Թաւրիզ և բանտարկուով: Թաւրիզ են բերուով նաև Ալի աղայի երկու կանանց: Ամբողջ երեք տարի Ալի աղան մնուով է բանտում: Քիւրդերի ցեղային բնոյթը բնորոշող փաստ են պատմուով նրա բանտային կեանքից:

Այդ ժամանակ Ալի աղան լինուով է մօտ Եօթանասուն տարեկան, գուցէ և աւելի, մազերը ճերմակած, թէև առոյգութիւնը տեղը: Բանտացիաը ինչ որ լպիրշ ակնարկ է անուով Ալի աղայի՝ կնոջ վերաբերմամբ, իհարկէ՝ բանտի մէջ: Ալի աղայի խոր ընկած աչքերը փայլատակուով են, արիւնը խփուով է դուրսը, նա սեղմուով է ջլուտ ձեռները և ուժգնութեամբ քաշուով հանուով է գետնից անագին երկաթը, որին ամբացրած էր ձեռքի շղթան, և այնպէս է խփուով բանտացետի գլխին, որ խսկոյն մահանուով է: Այս փաստը յայտնի է ամբողջ Ատրպատականին, ամենքը պատմուով են առանձին յափշտակութեամբ և երկիւղածութեամբ:

Ալի աղան բանտումն էլ մեռնուով է:

Մահմուդ աղան, Ալի աղայի որդին, գնուով է Թաւրիզ, բերուով է և ճարայուով հանդիսաւոր կերպով թաղուով:

Ալի աղան հոչակ և անուեն է հանել ոչ միայն պարսից կառավարութեան դէմ մղած իր հերոսական և ըմբոստ կուուով, այլ և նա մի շարք ընդհարումներ է ունեցել Տաճկաստանի քիւրդերի հետ և միշտ էլ յաղթող է դուրս եկել: Այդ ընդհարումների շարքում ամենանշանաւորը և փայլունը կազմուով է Ըմար (Շարաֆ բէյի հայրը) և Դրբէ աղաների դէմ մղած կռիւր:

Ալի աղան թողնուով է երկու որդի՝ Մահմադ և Թամըր: Աւթօինների գլուխ է անցնուով մեծ որդին, Մահմադ աղան: Նա բնակութիւն է հաստատուով Մոմայում: Շուտով կռիւ է ծագուով Մահմադ աղայի և կարդար քիւրդերի մէջ: Մահմադ աղան չկարողանալով դէմ դնել կարդարների զօրեղ ուժին՝ յետ է:

քաշուում և անցնում է տաճկական հողը: Օսմանեան կառավարութիւնը ընդհանրապէս հաճութեամբ և զրկարաց ընդունում է հալածուող քիւրդ ցեղապետներին և տեղ է տալիս սահմանազլխում, որոնք կազմում են մի տեսակ պատնէշ տաճիկ պետութեան համար զրսի «աւերիչ» հոսանքի հանդէպ: Եւ իսկապէս Մահմադ աղան էլ ուրախութեամբ ընդունում է, և ապաստան է տրւում մի հայաբնակ գիւղ: Բայց նա երկար չի մնում իր նոր ապաստանում և անցնում է Վան, ուր սիրալիբ կերպով ընդունւում է Համիդ փաշայի կողմից: Մահմադ աղայի հետ լինում է և նրա եղբայրը՝ Ըմար աղան: Նրանք երկար անկարող են լինում մնալ Վան և 1893 թուին նորից անցնում են Պարսկաստան ու զոռով հաստատւում նորից իրանց հօր հողի վրայ՝ Ճարա: Եւ կառավարութիւնը ստիպուած՝ էլի Ճարայի հաքիմութիւնը յանձնում է աւրօի ցեղին, Մահմադ աղային: Իսկ երկու տարի յետոյ, 1895 թուին, Մահմադ աղան և նրա որդի Զաֆարը կանչւում են Թէհրան, մի խոշոր գումար տուգանք է (Չառմա) նշանակւում կառավարութեան կողմից նրանց անցեալ յանցագործութիւնների համար, խալաթ և շքանշաններ \*) են տալիս և ճանապարհում Սալմաստ՝ Ճարա նստելու:

Այսքանից յետոյ Մահմադ աղան աւելի է երես առնում և աւելի սանձարձակ դառնում իր ասպատակութիւնների մէջ: Եւ երբ նրան ու Զաֆար աղային կանչում են Դելիման, Սալմաստի կենտրոնական բաղաքը և պահանջում են Թէհրանի նշանակած տուգանքը, նրանք կտրուկ և յանդուգն կերպով մերժում են կատարել դատաւորի պահանջը: Անմիջապէս հէնց Դելիմանում կռիւ է առաջանում քիւրդերի և դատաւորի մէջ: Պարսիկներից սպանւում են 2—4 սարվազ, իսկ քիւրդերը մի զոհ տալով՝ շտապում են Ճարա:

Այդ օրից էլի խիստ լարւում է պարսից կառավարութեան և աւրօի աշխրէթի մէջ յարաբերութիւնը: Կառավարութիւնը մեծ ուժով գնում է Ճարայի վրայ: Հարկ է զգացւում կուռի դաշտ հանել նաև թնդանօթ: Քիւրդերը գրաւած լինելով ամուր դիրքեր՝ մեծ հարուած են տալիս պարսից զօրքին և չնչ թոյլ տալիս բարձրանալ լեռները: Միքանի անգամ քիւրդերը յետ

\*) Առասարակ դա Պարսկաստանում ընդհանրացած երկոյթ է: Եթէ շատեք միշտ, գէթ յաճախ, պաշտօնանկ արած կամ յանցանքի մէջ բռնուած պաշտօնեային կանչում են Թաւրիզ, անպատում են, բանտարկում, տուգանքի ենթարկում և ապա սիրալիբ ընդունելուց յետոյ խալաթ տալիս ու ճամբում իր պաշտօնին:

են մղում զօրքին: Մի յարձակման ժամանակ, ինչպէս պատմում են, Մահմադ աղան և Ջաֆար աղան վերցնում են մի թնդանօթ, և իբր թէ մի-երկու օր պահելուց յետոյ լուր են ուղարկում զօրքի ընդհանուր հրամանատարին, ը գան տանեն, քանի որ իրանց պէտք չէ:

Անկարող լինելով երկար դիմադրել՝ Մահմադ աղան դիշերով Ջաֆար աղայի հետ անցնում են տաճկական սահմանը: Պարսիկները նորից գալիս և տիրում են Ճարան:

Այս դէպքից մի քանի ամիս յետոյ սկսւում է Ֆէղայիների արշաւանքը տիրահռչակ Շարաֆ բէյի վրայ, Քիւրդերին օգնութեան է գնում և Ջաֆար աղան: Նա մի երկու տեղ կողմ է բռնւում Ֆէղայիներին հետ. մի Ֆէղայու զնդակ վիրաւորում է նրա երեսը. սպին մինչև այժմ էլ պարզ նշմարելի է:

«Արշաւանքից» յետոյ տաճիկ կառավարութիւնը Ջաֆարին իր հօր հետ միասին հաստատում է Սանիկ: Նրանք շատ էլ երկար չեն կարողանում մնալ այնտեղ: Նրանք ընկնում են երեսի վրայ, անյտէր. կառավարութիւնը առանձին ուղարկութիւն չի դարձնում, հնարաւորութիւն չեն ունենում իրանց պահանջներին բաւարարութիւն տալու, ծառաներն էլ կամաց-կամաց հեռանում են նրանցից: Նըրանց վիճակը դառնում է անտանելի: Երբ ներկայ շահ Մուղաֆէր-էդդինը կատարում էր իր առաջին ճանապարհորդութիւնը դէպի Եւրոպա (1900), Ջաֆար աղան շտապում է ընդառաջ, գնում է Ջուլֆա, ներկայանում է սաղրազամին, պարզում է իր վիճակը և խնդրում է ապաստան: Սաղրազամի կողմից յարգւում է նրա խնդիրը, և նորից իրաւունք է տրւում վերադառնալ Ճարա:

Ճարա հասնելուն պէս Ջաֆար աղան կանչում է հօրը. բայց վերջինս մերժում է, առարկելով. «Այժմ դու կը լինես մեծը, էլ ինչո՞ւ եմ դալիս. դա ինձ համար անպատուութիւն է. բոլոր ծառաները քո շուրջը կը խմբուեն, և ես մենակ կը մընամ»: Էլի միքանի անգամ թախանձում, աղաչում է հօրը, որ համաձայնի գալ խոստանալով ցեղապետութիւնը նրան յանձնել: Մահմադ աղան վերջիվերջոյ համաձայնում է: Ջաֆար աղան հանդիսաւոր և փառաւոր ընդունելութիւն է ցոյց տալիս, բաւական տարածութիւն գնում է դիմաւորելու և առօք-փառօք բերում է Ճարա:

—Ահա Ճարաս, ասում է Ջաֆար աղան. ինչպէս քեզ հանեցի այստեղից, այնպէս էլ բերի, թող քեզ լինի. այսուհետև դու աղա, ես էլ քո ծառան:

Բայց նրանք՝ հայր և որդի՝ միայն երկու-երեք ամիս են

սիրով և համերաշխ ապրում: Սկսում են նորից գժտութիւններ, Դրանց յարաբերութիւնը աւելի լարում և սուր կերպարանք է ստանում նամանականդ այն ժամանակ, երբ Ջաֆար աղան մի կնոջ բռնաբարում է, իսկ հայրը նախատում է նրան: Հայր և որդի խիստ ընդհարում են իրար հետ, նոյնիսկ ծեծում են: Երկուսն էլ լինում են անզէն: Մահմադ աղան ամբողջ մի դաստա մազ է հանում որդու քեաքիւլից: Այդ ընդհարմանը մամնակցում են Մահմադ աղայի երկու որդիները՝ Շաքուր և Սմտկօ: Սմտկօն թեթև կերպով վիրաւորում է Շաքուրին, և այդ կւիւը վերջանում է նրանով, որ հայր և որդի բաժանւում են, Սմտկօն հետևում է Ջաֆարին, իսկ Շաքուրը՝ հօրը:

Դրանից յետոյ ամբողջ հրապարակը մնում է Ջաֆար աղային, որ դառնում է միահեծան տէր, իշխող: Նա աւելի ու աւելի ամրացնում է իր դիրքը, հետզհետէ ստուարացնում ծառաների և կռուողների թիւը, զինում նրանց կանոնաւոր զէնքերով և սկսում կողոպուտը, ասպատակութիւնները, սպանութիւնները... Նա յարձակում է մօտակայ գիւղերի վրայ, զարկում տանում նախիրը, ոչխարի սուրուն, ժողովրդին անընդհատ պահելով զարգանդի, դողի մէջ. ճամբորդներին և գիւղացիներին բռնում, թալանում, յանդգնում է յարձակուել, այն էլ միջանի անգամ, Սալմաստի կենտրոնական քաղաքի վրայ, ոչխարն ու տաւարը տանում, այն էլ ցերեկով: Նա յաճախակի գնում է Տաճկաստան, ահագին քանակութեամբ մալ զարկում բերում այստեղ, ծախում շատ աժան գներով, իսկ այստեղից էլ տանում Տաճկաստան, վաճառում: Չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ, որ այս մի տարուայ ընթացքում միայն Տաճկաստանից բերած կը լինի մօտաւորապէս 20,000 թումանի մալ, նոյնքան էլ, գուցէ և աւելի, կարելի է հաշուել Պարսկաստանից, գլխաւորապէս Սալմաստից:

Դեռ անցեալ տարուանից կառավարութիւնը միջոցներ էր խորհում նրան բռնելու: Մաջիդ-ուլ-Սալթանէի պատրաստած թակարդը, որի մէջ ընկաւ մամադիների ցեղապետ Ըմար աղան, իսկապէս պատրաստուած էր Ջաֆարի համար: Հէնց այդ դէպքից յետոյ Ջաֆար աղան աւելի զգուշացաւ, սկսեց ուշ-ուշ գալ Դելիման և գալիս էլ ունենում էր մօտ 20—30 զինուած քիւրդեր, իսկ թալանի, կողոպուտի և սպանութիւնների մէջ էլ աւելի կատաղի, անխիղճ և անողոք դարձաւ: Օր չէր անցընում, որ լուր չհասնէր մի որևէ թալանուած գիւղի մասին:

Ահա այս բոլորը վերջապէս համբերութիւնից հանեցին պարսիկ կառավարութեան և ձեռնարկեցին մի վճռական բան

անհրու: Դեռ այս ապրիլից սկսած կամաց-կամաց Սալմաստ էին լցում հետեակ և գլխաւորապէս ձիաւոր զօրք. և գալիս էին անընդհատ Քաւրիզից, Նարաղազից, Մակուից, Ուրմի-ից, Մարանդից, շահսէօվանները, Ատրպատականի ամենա-քաջ, հոչակուած և ընտիր համարուած կոռուղները: Իսկ թէ ինչի համար էին հաւաքուած, լցում Սալմաստ, յայտնի չէր որոշակի, միայն պտտում էին տարբեր, թերևոյէմ ենթա-դրուածութիւններ և կարծիքներ: Ընդհանրապէս նկատելի էր այն, որ պարսիկների սկսած զործը շատ լուրջ էր և տարւում էր լուռ, խելացի կերպով: Միայն կոռուից մէկ թէ երկու օր ա-ռաջ պարզուեց նրանց միտքը:

Ձաֆար աղան շրջանկատ մարդ է. նա անտարբեր աչ-քով չէր նայում պարսիկների այդ շարժումների, խուլ պատ-րաստութիւնների վրայ: Նա պահում է լրտեսներ, որոնք ամեն ինչ ճշտութեամբ հաղորդում են նրան:

Ջօրքերի ընդհանուր հրամանատար Սէֆուլ մամալիքը յուլիսի 17-ին Ձաֆար աղային կանչում է Դելիման տեսակցե-լու և մի քանի կարևոր հարցերի մասին խորհրդակցելու պատը-րուակով, բայց իսկապէս ծուղակը գցելու նպատակով: Ձաֆար աղան բացարձակ մերժում է, և երկուստեք համաձայնութեամբ տեսակցութեան վայր է նշանակում Գիւլիզան գիւղը, որը 1½ ժամ հեռու է Ճարայից, իսկ մօտ 1 ժամ Դելիմանից: Տեսակ-ցութիւնը նշանակուած էր յաջորդ օրը, սեպտեմբերի 18-ին, առաւօտեան ժամի 9-ին:

Նախօրօք Գիւլիզանի մի շարք կարևոր տեղերում զի-նուորներ է նշանակում, ինչպէս և ճանապարհի որոշ կէտե-րում, և դրանց կարգադրուած է լինում կենդանի ձերբակալել Ձաֆարին կամ հակառակ պարագային ուղղակի սպանել:

Եւ իսկապէս Ձաֆար աղան նշանակուած ժամին մօտ 20—25 քիւրդերով մօտենում է Գիւլիզանին: Մի քիւրդուհի, ինչպէս պատմում են, յայտնում է պարսիկների որոգայթի մասին, միւս կողմից էլ զինուորներն սկսում են զանազան կողմերից գնդակներ արձակել: Ձաֆար աղան յետ է դառնում և կռուելով հեռանում: Պարսիկներից սպանւում են երկուսը, իսկ քիւրդերից և ոչ մէկը: Այդ անաջող դէպքը խիստ իրարան-ցում է առաջացնում Գիւլիզանում բանակի մէջ, նոյնը և Դե-լիմանում: Մի յիսնապետ միայն իր զինուորներով համաձայ-նում է հետեւել նրան, բայց շատ չանցած՝ ընկնում է, իսկ բո-լոր զինուորներն էլ փախչում են Գիւլիզան:

Դելիմանում սարսափելի խառնաշփոթութիւն առաջացրին այդ լուրերը:

Այս անաշող դէպքերի տպաւորութիւնը թաւրիզի վրայ էլ ազդեց. վալիաթը հեռագրով խիստ կարգադրում է «կամ Ջաֆարի դուռը և կամ Սէֆուլ մամալիքի»: Յաճախ չի պատահում նման կտրուկ, խիստ և որոշակի կարգադրութիւններ իրանի աշխարհում: Թագաժառանգը միայն այդ կարգադրութեամբ չի բաւականանում: Նրա հրամանով էլի նոր ուժեր են ուղարկուում զանազան կողմերից լաւ հրացաններով զինուած, իր պալատի քէշիկչիբաշուն էլ ուղարկում է ընդհանուր զօրքի հրամանատարութիւնն ստանձնելու: Կռիւր հետզհետէ լուրջ և տաք բնաւորութիւն է ստանում:

Ամենախիստ կռիւր տեղի ունեցաւ յուլիսի 20-ին, Ճարայի մօտերքը: Քիւրդերը բռնել էին իրանց անառիկ դիրքերը, իսկ պարսիկները մօտենում էին բերդին և նրանց դիրքերին, թնդանօթով էլ միաժամանակ հարուածում բերդի ստորոտները և քիւրդերի բռնած վայրերը: Կռիւր շարունակուում է գրեթէ ամբողջ օրը: Պարսիկ բանակը չկարողանալով այլևս առաջ գնալ՝ տեղի է տալիս, կռուի դաշտում թողնելով ինչպէս ասում են՝ մօտ 30 դիակներ: Քիւրդերի վնասը յայտնի չէ: Թէև բոլորն էլ ասում են, որ Ջաֆար աղան ոչ մի զոհ չի տուել, բայց այդ դրականապէս դժուար է պնդել, քանի որ քիւրդերը դիակները իսկոյն վերցնում են, չեն թողնում կռուի դաշտում:

Պատմում են, որ Ջաֆար աղան պարսիկ բանակի դէմ կռուում էր շատ աննշան ուժով. նրա կռուողների թիւը 50-ի չափ է եղել: Նրա յանդգնութիւնները և քաջագործութիւնները չափազանցրած դոյներով էր հասնում մեզ, և նա աւելի հեղինակութիւն, հռչակ էր ստանում ազգաբնակչութեան աչքում: Աւերում է բերդը, կտորտում նոյնիսկ սենևակների ապակիները և դռները, թողնում է ճարան և գիշերով հեռանում դէպի սահմանի բարձր դիրքերը, Շիփրանի մօտերքը:

Յաջորդ օրը զօրքը մտնում է ճարա, նա էլ միւս կողմից սկսում է աւերածն առաջ բերել: Լաւ կողոպուտից յետոյ զօրքը հետամուտ է լինում Ջաֆար աղային. վերջին կռիւր տեղի է ունենում Շիփրանի մօտ, ուր Ջաֆար աղան գրաւած է լինում ամուր դիրք: Պատմում են, որ կռուի ամենատաք ժամանակ, երբ թշնամու գնդակները կարկտի նման տեղում էին, Ջաֆար աղան նստած քարի յետեւ՝ թէյ էր խմում հանգիստ, անսլոզով: Այդտեղ իբրթէ միակ տաք կռուողը եղել է Սմտկօն, իսկ բոլորը միայն 11 հոգի են եղել: Ջաֆար-աղան էլի հեռու է քաշուում, և պարսիկները ձեռնուռնայն վերադառնում են՝ լուր տարածելով, թէ նա անցել է տաճկական հողը: Դեռ զօրքը ճարայից

չվերադարձած, Զաֆար աղայի մարդիկն էլի յարձակում են մօտակայ գիւղերի վրայ և ամբողջապէս թալանում: Այան գիւղի ամբողջ մալը տանելուց զատ՝ սպանում են նաև 9 հոգի: Յարձակումներ եղան նաև Հին-քաղաքի, Վարդունի և Սարամերիկի վրայ: Միայն Սարամերիկում հայերը խիստ դիմադրութիւն ցոյց տուին: Եւ այդ բոլորը կատարւում էր հէնց ընդհանուր հրամանատարի ներկայութեամբ: Այժմ կամաց-կամաց ցրւում է դօրքը, իսկ Զաֆար աղան աւելի խրոխտացած և երես առած՝ առաջ է տանում իր ասպատակութիւնները և սպանութիւնները: Այժմ, եթէ պտտուող շրուկներին հաւատանք, պարսիկ կառավարութիւնը Զաֆար աղային է ուզում յանձնել շարան:

Ե. ՖՐԱՆԿԵԱՆ